իշխանութիւն քեզ ստանալ պահպանութիւն զօրաց մերոց որ 'ի վիճակի յերևանու, և պատուիրեմք քեզ զի 'ի չորս եղանակի տարւոյն ընծայեսցես 'ի դրունս բարեվարք տանն հայոց համարն եկամտից և ծախից և ծննդոց 'ի բնութենէ մարդոյ, և ննջեցելոց, և համարն բոլոր տարեկան մի անգամ տուաք իշխանութիւն քեզ աքսորել 'ի վիճակէն յերևանու վատթարս, աղմկողս չար նշաւակս, զի ժողովուրդք մեր կալով մնասցեն ընդ ամենայն առաքինութեամբ զարդարեալ, տուաք իշխանութիւն քեզ զի խորհրդակցօք ընդունելութեամբ վաճառել երկիր առ սեպհական ազգն հայոց վասն շինութեան թէ բնակութեան թէ այգոց և թէ վարելոց, և տալ նոցայ թուղթ հաստատութեան այս մտածութեամբ զի իւրաքանչ գնողն պարտաւոր լինիցի հատուցանել հարկ, մաքս, հաս և բաժին 'ի տունն հայոց ըստ Օրինօք, և պատուիրեմք քեզ զի ամենայն կառավարութիւնն քոյ պահեսցես ըստ նմանութեան և համեմատութեան Օրինացն հայոց, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ և բարեվարք տանն հայոց յայսմ աւուր 'ի յամսեանն յունվարի մին յամի Տեառն փրկչին մերոյ 1773։

Վկայեմք որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին.

Սեղբեստրոս Արք Եպիսկոպոս երկրորդ Տանուտէր։ ○